

14.424

Ա. ԲՈՒԶԴԵՍ

ԴԵՊՔԵՐԸ  
ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ  
ՅԵՎ ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ

~~32~~  
R-98

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1938

1 DEC 2009

Ա. ԲՈՒԶԴԵՍ

26 SEP 2006

32  
F-9T

Կ

ԴԵՊՔԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ  
ՅԵՎ ԱՎԱՏՐԻԱՅՈՒՄ

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ԹԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1938

1 MAR 2013

14924

Գաշիստուկան Գերմանիան համաշխարհային պատերազմի դլխավոր հրձիկն և : Վերջին ժամանակներում կենտրոնական Յեվրոպայում ծավալված դեպքերը հաստատում են այդ : Նրանք գերմանական Փաշիզմի աճող ադրեսիվության ցուցանիշն են հանդիսանում, Փաշիզմի, վորը քափ-քրտինք մտած ձգտում և համաշխարհային նոր պատերազմ սահմանադրույժ անել աշխարհը վերաբաժանելու համար :

Ի՞նչպես եյին զարգանում դեպքերը կենտրոնական Յեվրոպայում, առաջին հերթին Գերմանիայում և Ավստրիայում, և ի՞նչ են դրանք նշանակում :

1938թ. գետրվարի 5-ին Փաշիստական մամուլը Գերմանիայի բնակչությանը և ամբողջ աշխարհին աղդաբարեց մի «ուրախ» դեպքի մասին՝ Հիտլերն ամբողջ քաղաքական, ռազմական և տնտեսական իշխանությունը կենտրոնացրեց իր ձեռքբերում : Նա իր վրա վերցրեց Գերմանիայի բոլոր զինված ուժերի ղեկավարությունը : Գյորինդը ստացավ գեներալ-Փելդմարշալի ստիճան : Ռազմական մինիստրությունը վերակազմվել է՝ գեներալ-Փելդմարշալ Բլումբերգը, Գերմանիայի ռազմական նախկին մինիստրը Հիտլերի իշխանության դլուխ անցնելու որվանից, և գեներալ-դնդապետ Ֆրիչը, բանակի դլխավոր հրամանատարը, հանված են իրենց պոստերից :

Հասկանալի յէ, Հիտլերյան կառավարությանը «ցանկավի չեր» հրաժեշտ տալ այդ գեներալներին :



2997  
38  
А. БУЗДЕС

СОБЫТИЯ В ГЕРМАНИИ  
И АВСТРИИ

Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1938

Բայց նրանց ծեր հասակը և առողջության վատ վիճակը թելադրեցին Հիտլերին իրենց գրաված պատուներից նրանց ազատելու անհրաժեշտությունը։ Այսպէս եյին ջանում բացատրել այդ բանը Փաշիստական կրագրերը։

Հիտլերը հատուկ նամակներով դիմեց այդ յերկու դեներալներին, «ցալելով», վոր ստիպված և լինում նրանց ազատել աշխատանքից։ Բլումբերգին դրած դիմումի մեջ Հիտլերը դրում եւ. «Խազմական և տերետորիալ տեսակետից Գերմանիայի լիակատար սուվերենության՝ 1936 թ. կատարված վերականգնման ժամանակից սկսած, դուք միքանի անդամ՝ խնդրել եք ինձ ազատել ձեզ ձեր գրաված պաշտոնից, վորը ծանր պահանջներ և գնում ձեր առողջության առաջ։ Այժմ, մեր ժողովրդի և նրա զինված ուժերի վերականգնման հինգ տարին վերջանալուց հետո, յես ուզում եմ բավարարել ձեր նորից կրկնած խնդիրը։»

Հատկապես բնորոշ եւ Հիտլերի դիմումը նախկին գլխավոր հրամանատար Ֆրիչին, դիմում, վորը մենք ըերում ենք ամբողջովին։

«Ինկատի ունենալով ձեր առողջության վատ վիճակը, դուք հարկադրված եք յեղել խնդրելու ինձ ազատել ձեզ ձեր գրաված պաշտոնից։ Քանի վոր ձեր վերջերս հարավում ապրելը սպասված հետևանքները չփոխ, յես վորոշեցի կատարել ձեր խնդիրը։»

Ոգտվում եմ բանակում ձեր ունեցած իսկական ծառայությունից հեռանալու հանգամանքից նրա համար, վորպեսզի խորը յերախագիտությամբ նշեմ ձեր աչքի ընկնող ծառայությունները բանակը վերականգնելու բնագավառում, վորովհետեւ ձեր անունը

պատմականորեն առհավետ կապված կլինի գերմանական բանակի հզորության այս վերանորոգման և վերականգնման հետ 1935 թ. մարտից մինչև 1938 թ. փետրվարը ընկած ժամանակամիջոցում։»

Այս դիմումներին նայելով, կատարված տեղակոխումները վոչինչ արտասովոր բան չեն ներկայացնում, և Փաշիստական Գերմանիայում ամեն ինչ կարգին է։ Պետք եր փոխարինել այդ գեներալներին։ Այդ մասին նույնպես հոգաց «Ֆյուրերը»։

Զար լեզուները տարածեցին ելի մեկ, չենց նույնքան «ստույգ» վերսիա ուզմական մինիստր Բլումբերգին հրաժարեցնելու պատճառների մասին։ Բացի ծեր հասակից (60 տարեկան) և առողջության վատ վիճակից այս գործում ճակատագրական դեր խաղաց երր թե նրա հարսանիքը։

Պրուսական ազնվականության հին տրադիցիաների համաձայն Փելդմարշալը պետք եւ իրեն կին ընտրի միմիայն իր խալի շրջանից։ Բայց Բլումբերգն ամուսնացել եւ 29 տարեկան իր քարտուղար Գրյունի, արհետավորի աղջկա հետ։ Այս բանը հակասում եւ հին պրուսական ուզմական կատարյալի տրադիցիաներին։ Գերմանական բանակում սպաների, նամանավանդը բարձր գիրք զբավողների նման ամուսնություններ չեյին թույլատրվում։ Ողտովելով այս առիթից, ուայխովերը սպահանջեց Բլումբերգի հրաժարականը։ Ռայխսվերի գեներալները բողոք հայտնեցին այն առթիվ, վոր Հիտլերը և Գյորինդը ներկա եյին Բլումբերգի հարսանիքին։ Բայց այժմ, Հիտլերի կարգադրությամբ, Բլումբերգը հրաժարեցված է։ Դրանով իսկ ուայխսվերը բաշարվեց, և գերմանական բանակի ու պրուսական

աղնվականության համազգեստի պատիվը պահպանված  
է:

Այսպիսի տեսք ունեցին փետրվարի 5-ի դեպքերը  
Գերմանիայում՝ Փաշխտական մամուլի լուսաբան-  
մամբ: Իրականում, գերմանական ռայխավերի ղեկա-  
վարության մեջ և Փաշխտական Գերմանիայի այլ ղե-  
կավար որդաններում կատարված տեղափոխումները  
կրում եին ամենախն վոչ այնպիսի անմեղ բնույթ,  
ինչպես այդ ջանում եր ներկայացնել Փաշխտական  
մամուլը:

Իրականում հասկա ի՞նչ տեղի ունեցավ Գերմա-  
նիայում:

Վերը հիշատակված տեղափոխումների մասին վե-  
տրվարի 5-ին Հիտլերի հրապարակած կարգադրու-  
թյուններն արտացոլում են ներքին տարածայնու-  
թյունները Փաշխտական Գերմանիայի ղեկավարող  
շրջաններում: Պայքարը Փաշխտական վերնախավե-  
րում սկսվել ե փետրվարի 5-ից շատ առաջ: Մասնա-  
վարքես, անտագոնիզմը ռայխավերի կադրային սպա-  
յության և Փաշխտական ղեկավարության մեջ զարգա-  
ցել ե Հիտլերի՝ իշխանության դուստ կանոներու մո-  
մենտից: Այդ պայքարը հատկապես սրվեց 1938 թ.  
հունվարի վերջին որերին: Բայց Փաշխտական «աղա-  
մամուլը» բոլոր ուժերով ջանում ե թաղցնել յեղած  
հակասությունները, և հարկ ե լինում բոլոր այդպիսի  
բաները լոկ կոռահել, իսկ հետագայում իմանալ տեղի  
ունեցած փաստերի մասին:

«Այսորվա Գերմանիայում քաղաքական դիամանե-  
րը տեղի յեն ունենում կուլիսների հետևում: Յեկ մի-  
այն յերբ խաղը վերջացած ե, մենք իմանում ենք, թե

ի՞նչ ե տեղի ունեցել և վորոնք են տեղի ունեցածի  
հետևանքները», —նշում ե անդլիական կոնսերվատիվ  
«Խմինդ ստանդարտ» լրագրի 1938 թ. փետրվարի 5-ի  
համարը:

Անդլիական լրագրի այս բնութագիրը վերաբե-  
րում է ղեկավերի թե՛ պատճառների և թե՛ բնույթի  
լուսաբանմանը, ղեկավեր, վորոնք տեղի ունեցին Գեր-  
մանիայում 1938 թ. փետրվարին: Այս ղեկավերը, վո-  
րոնք իրենց արտացոլումն են գտել Փաշխտական կա-  
ռավարության կազմի մեջ տեղի ունեցած խոշոր տե-  
ղափոխումների մեջ, պարզաբանվում են, յեթե միայն  
ուշադրությամբ նայենք իրերի խկական դրությանը  
Գերմանիայում, այլ վոչ թե այն պատճառով, վոր  
նրանց մասին գրում են Փաշխտական լրագրերը:

Այս ղեկավերը հասկանալու բանալին տակս ե մեղ  
թեկուղ և գերմանական Փաշխտական կողմից իրենց  
գիլտատուրայի հնդամյակը տոնելու բնույթը:

Հունվարի 30-ին, Փաշխտական կայսրության  
դլուխ անցնելու որը, «յերրող կայսրության» մեջ նըշ-  
վում ե վորպես տոն: Այդ որը սովորաբար հավաք-  
վում ե «ուայխստագը», և Հիտլերը տրադիցիոն ձառ  
ե արտասանում: Ֆաշխտական դիկտատորայի հեր-  
թական տարեղարձը տոնվեց Գերմանիայում նշանա-  
կալիորեն ավելի պակաս հանդիսավոր կերպով, քան  
անցյալ տարիներում: Նույնիսկ ինքը «Փյուրերը»  
ձեռնպահ մնաց յելույթ ունենալուց: Արդեն ամեն ինչ  
պատրաստված եր «ուայխստագի» հունվարի 30-ի տրա-  
դիցիոն նիստի առթիվ, արգեն դրված եյին բարձրա-  
խոսներ շենքի և դրոշակների կայմի մոտ, —բայց ան-  
սպասելիորեն «ուայխստագի» նիստը ի չիք դարձավ.

Հենց այդպէս ել անսպասելիորեն ի չեք դարձավ ծանր ինդուստրիայի ներկայացուցիչների բանկետը, վորտեղ Հիտլերը պետք ե ճառով հանդես գար Փաշիստական կառավարության տնտեսական քաղաքականության մասին:

Թաշիստական գիտատուրայի հնդամյակի այնքան «անազմուկ» համերժացման այդ փաստը Գերմանիայի քաղաքական դրությունը գիտող մարդկանց ուշադրությունը լարեց. յեթե Հիտլերը, վորը սիրում եր ամեն բանի առթիվ հանդես գալ ճռճռան ճառերով, հանկարծ չրաժարվեց յելույթ ունենալուց հնդամյակի որև, ապա, ըստ յերեսութին, այստեղ թագնված ե մի ինչ-վոր լուրջ պատճառ: Յեվ այդ պատճառը շատ չուտով յերեան յեկավ: Բայ սովորության, հունվարին, տարեղարձի նախորյակին, Հիտլերը իր մոտ ներխուսեսդադենի վիլայում սարքում եր մի շարք պաշտոնական ընդունելություններ և խորհրդակցություններ: Այդ խորհրդակցություններում Հիտլերը, ինչպես գրում ե Փրանսական «Թան» լրադիրը, շոշափում ե զանազն խմբերի կարծիքը, իրազեկ ե գառնում նրանց տրամադրություններին և դրան համապատասխան վորոշում ե իր վարքագիծը: Ընթացիկ տարրում այս ընդունելություններն ու խորհրդակցություններն անցնում եյին առանձնապես բուռն կերպով: Խայխավերի բազմաթիվ դիմումները ե մյուս շրջանների արտահայտած հավակնությունները վկայում եյին, վոր կառավարող առանձին խմբակներում առկա յն լուրջ տարածայնություններ ներքին ու արտաքին քաղաքականության հիմնական հարցերի շուրջը:

Ամենից առաջ Հիտլերը այդ ընդունելությունների

ժամանակ լսեց դժբոհություն իսպանիայի ինտերվենցիայի հետեանքներից, դժբոհություն իտալիայից, Դերմանիայի դաշնակցից այդ արյունուալիանություն: Զգձգվող պատերազմը, հանրապետական զորքերի կողմից ինտերվենտներին ցույց տրված հերոսական դիմադրությունը խիստ դժբոհություն առաջացրին Փաշիստական քաղաքականությունից Գերմանիայի լայն շրջաններում: Այս տրամադրությունները համականք գտան նաև բանակում: Խայխավերի շրջանները բացահայտ դժբոհություն եյին արտահայտում անժամանակ սկսված և վոչ-բարձականաչափ նախապատրաստված ինտերվենցիայից: Բացահայտ անհավանությունն արտահայտվում եր նաև Գերմանիայի ու Ճապոնիայի դաշնութիւնի առթիվ: Ճապոնիայի կիրառած ավանդություններական քաղաքականությունը, նրա ձեռնարկած պատերազմը Զինաստանում դժվարացրին նրա դաշնակիցների համար հարաբերությունները Յելլոպայի հիմնական կապիտալիստական պետությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի հետ:

Այսպիսով, ռայխավերի ներկայացուցիչները փաստություն արտահայտվում եյին ընդդեմ «Հոռմ-Բեռլին-Տոկիո առանցքի», վորը գարձել եր Գերմանիայի արտաքին քաղաքականության հիմքը: Փրանսական «Թան» լրագիրը հաղորդում ե.

«Խայխավերի զեկավարները «Փյուրերի» հետ ունեցած ինտերվյության ժամանակ քննադատության յենթարկեցին պետության կողմնորոշումն արտաքին քաղաքականության հարցերում: Նրանք դեմ եյին արտահայտվում իտալիայի հետ չափազանց սերտ համագործակցությանը, իսպանիայում յեղած ինտերվենցիայի

զեմ և ձապոնիայի հետ համագործակցելու դեմ՝ Նրանք ազդարարեցին, վոր անհրաժեշտ և մերձնալ կոնդոնի հետ, թուլացնել Փարիզի հետ ունեցած հարաբերությունների լարումը»:

Մեծ հավակնություններ առաջադրեցին, այս իսկ լրագրի խոսքերով, նաև արդյունաբերական շրջանների և Հողատերերի ներկայացուցիչները։ Արդյունաբերողները դժգոհություն արտահայտեցին Փաշիստական կառավարության կիրառած՝ ավտարկիայի քաղաքականությունից։ Կալվածատիրության կողմնակիցների ներկայացուցիչները հայտարարեցին, թե «քառամյա պլանը» քայլայում և գերմանական գյուղատնտեսությունը։

Ֆաշիստական դիկտատուրայի հնդամյակի տոնակատարությանը նախորդող այս խորհրդակցություններում հայտնաբերվեցին լուրջ տարածայնություններ ներքին և արտաքին քաղաքականության հիմնական հարցերի շուրջը։

Անդիմական լեյբորիստական՝ «Դեյլի Հերարդ» լրագիրը 1938 թ. փետրվարի 7-ին այսպես է ընորոշում՝ Գերմանիայի զեկավար շրջաններում տեղի ունեցած այն պայքարը, վորը 1938 թ. հունվար-փետրվարյան դեպքերի խոկական պատճառը հանդիսացավ։

«Ահա այն, ճգնաժամի ներքին պատմությունը, ճգնաժամ, վորը սպառնում եր Գերմանիան անջատել... Ճգնաժամը պայմանավորված եր մեծ պայքարի յերեք տեսակով. 1) պայքար բանակի ու Փաշիստական կուսակցության միջև. 2) Գյորինգի «քառամյա պլանի» կազմակերպության ու խոշոր արդյունա-

բերողների միջև և 3) հենց իրենց՝ ղեկավարող Փաշիստների միջև»։

Այսպիսով, Գերմանիայում Փաշիստական ուժի հնդամյակի տոնակատարությանը նախորդող խորհրդակցություններն ու ընդունելությունները խորը հակասություններ բացահայտեցին զեկավար բանակում և ցույց տվին այդ ուժի մի ամբողջ սնանկությունը։ Այս հանդամանքները նշանակալիորեն կրծատեցին Հիտլերի պերճախոսության հեղեղը։ Նա ստիպված եր տարեգարձի որը հրաժարվել Փաշիստական տիրապետության կայունության ու անսասնանության մասին իր արակիցին հանդիսավոր ճառերից։

«Եոյի ցյուրիխեր ցայտունգի» փետրվարի 6-ի համարը հալորդում և.

«Այս լուրը, թե Հիտլերը մտադրվել եր ոայխտատակում ազրեսիվ քաղաքական ճառ արտասանել և վոր շատ գեներալների կողմից աջակցություն գտած գեներալ Ֆրեչը արգելել և այդ ճառը, եւ ավելի հավանական և զառնում»։

Վո՞րն և Գերմանիայի կառավարող շրջաններից մի մասում յեղած դժգոհության պատճառը։ Ինչո՞վ բացարել, վոր գերմանական բուրժուազիայի ամենառեկացիոն ու իմպերիալիստական մասի ծրագիրի իրագործող Փաշիստական դիկտատուրան դժգոհություն սուածացրեց վո՞չ միայն ժողովրդական լայն մասսաների մեջ, այլև նույնիսկ հենց բուրժուազիայի զեկավար շրջաններում։ և բանակի զեկավարության մեջ։

Այդ դժգոհության պատճառն արմատավորված և անցած հինգ տարվա ընթացքում Փաշիստների տիրա-

սկսության հանրապումարում։ Յերբ Հիտլերը փետրվարի 20-ին մեծ ուշացումով այնուամենանիվ արտասանեց Փաշխտական դիլտառուրայի հնդամյակին նվիրված իր ճառը, նա ստիպված էր, յերկրում թագավորող իր թելիակատար բարեկեցության մասին արած սնապարձ հայտարարությունների կողքին։ ընդունել այդ ճառում, վոր «Գերմանիայի տնտեսական դրությունը ծանր է»։

Գերմանիան մի հսկայական ուազմական համբարի վերածելը, ամբողջ եկոնոմիկան պատերազմը նախապատրաստելու խնդիրներին յենթարկելը ծանր են անդրադառնում տնտեսության կարևորագույն ճյուղերի կացության վրա, սուր կերպով վատացնում են ժողովրդական լայն մասսաների գրությունը։

Հանրահայտնի յե, վոր Փաշխտների իշխանության գլուխ անցնելուց հետո ուժեղացավ բանվոր դասակարգի շահագործումը։ Ֆաշխտական ունեիմի տիրապետության 5 տարվա ընթացքում բանվորների աշխատավարձը Գերմանիայում լիջավ 30%-ով, իսկ այդ ժամանակամիջոցում աշխատանքային որվա տեղողությունն ավելացավ 16%-ով։ Դրա փոխարեն կապիտալիստների յեկամուտներն այդ 5 տարվա ընթացքում՝ 1932-ից մինչև 1936 թ. աճեցին 70%-ո՞վ։

Հակաֆաշխտական «Դոյչե բնֆորմացիոնեն» ըյուլիսենի տվյալների համաձայն, վորոնք կազմվել են գերմանական պաշտոնական վիճակագրության, հեման վրա, 1933 թ. ապրիլից մինչև 1937 թ. սեպտեմբերը առաջին անհրաժեշտության առարկաների գները աճել են 24,2%-ով։

«Թնդանոթներ յուղի փոխարեն» լոգունդն իրակա-

նացնելու կարգով, սուր կերպով փոխվեց գերմանական ներմուծման և արտահանման կառուցվածքը։ Ներմուծման հիմնական առարկան հանդիսանում է հումքը ուազմական արդյունաբերության համար, սպառման առարկաների ներմուծումը, վորսոց գերմանիան մեծ կարիք և զգում, սուր կերպով կրծատվեց։ 1932 թիվ հետ համեմատած՝ ճարպերի ներմուծումը կրծատվեց 207 հազ. տոննից մինչև 120 հազ. տ., գարու ներմուծումն ընկավ 568 հազ. տոննից մինչև 46 հազ. տ., կերերի ներմուծումը՝ 200 հազ. տոննից մինչև 7 հազ. տ. և այլն։ Դրա փոխարեն արդյունաբերական հումքի ներմուծումը հսկայական չափերի հասավ։ 1932 թ. ներմուծված եր 3,8 միլիոն տ. հանքանյութ և մետաղ, իսկ 1936 թ. 20 միլիոն տ. ալբելի։

Նշանակալիորեն ուժեղացավ հարկային ճնշումը։ Հարկային մուտքերը 1932/33 թ. կազմում եյլն 10,2 միլիարդ մարկ։ 1936/37 տնտեսական տարում նրանք աճեցին մինչև 15,9 միլիարդի, իսկ ընթացիկ ֆինանսական տարում կազմում են մոտավորապես 18 միլիարդ մարկ։ Առանձնապես ուժգնորեն աճեցին մասսայական հարկերը։ Աշխատավարձի հարկերն ավելացան 221,5%-ով, լայն սպառման ապրանքների հարկերը՝ 159,4%-ով և այլն։ Հարկային ճնշման ուժեղացումը խփում է ամենից առաջ աշխատավորներին, նրանց կենսական մակարդակին։ Այս հիման վրա կ'լ ավելի յե աճում դժգոհությունը բնակչության լայն մասսաների մեջ։

Ֆաշխտական Գերմանիայում դաժան ճնշման և յենթարկվում գյուղացիությունը։

Ֆաշիստական դիկտատուրան բարելավեց կալվածատիրական տնտեսությունների վիճակը, բարձրացնելով հացահատիկների գներն ի հաշիվ գյուղացիական անասնապահական տնտեսության:

Ֆաշիստական դիկտատուրայի բոլոր միջոցառումները գյուղատնտեսության բնագավառում—անասնակերի և սննդամթերքների ներմուծման կրծատումը, անասունի, կաթի, ձվի, բանջարեղենի ազատ վաճառումն արգելելը, մթերքների (այդ թվում և անասնապահական) հարկադիր հանձնումը պետությանը ցածր գներով և այլն, ուժեղ կերպով զարկում են մանր գյուղացիական տնտեսությանը: Աշխատավոր գյուղացիությունը կողոպտման և յենթարկվում նաև չափից դուրս հարկերի ու հանուրդների միջոցով:

Այս հողի վրա ե'լ ավելի յե աճում դժգոհությունը Փաշիստական ռեժիմից գյուղացիության մեջ, դժգոհություն, վորը յերեմն յերևան և գալիս մասսայական յելույթներում ընդդեմ Փաշիստական քաղաքականության: Տեղի ելին ունենում գյուղացիների յելույթներ ընդդեմ Փաշիստական իշխանության ներկայացուցիչների՝ գյուղերում: Գյուղացիների տրամադրությունն առանձնապես հանդես յեկավ Գիրմանիայում աշնանային մանյովիների ժամանակ: Գյուղացիները պատում ելին պլակատները, փչացնում ելին այն ամենը, ինչ կարող ելին, բանակի տեղաշարժումը դժվարացնելու համար: Այսպէս ելին արտօնայտում նրանք իրենց վերաբերմունքը Փաշիստական բանակի հանդեպ:

Նախքան իշխանության գլուխ անցնելը Փաշիստներն իրենց գեմազողիական խոստումներով իրենց

կողմն ելին գրավում մանր բուրժուազիայի նշանակելի մասը: Այժմ՝ մանր բուրժուազիան ավելի ու ավելի յե համոզվում, վոր ինքը չարաշար սիալված և յեղել: Փաշիստական Գերմանիայում գաժան շահագործման են յենթարկվում մանր արհեստավորների մասսաները: 1937 թ. սկզբում Գյուրինդը հայտարարեց, վոր Գերմանիայում յեղած մանր արհեստավորական ձեռնարկություններից 700 հազ. «անկայուն», ավելորդ են: Հարկավոր ե, վոր այդ ձեռնարկություններում աշխատողներն իրենց աշխատանք գտնեն այլ տեղերում: Իսկ վորպեսզի ստիպեն նրանց այդ անելու, նրանց այլևս հումք չեն տալիս, իսկ հարկերը և ատորինի տուրքերը քանի գնումը բարձրանում են: Այսպիսով մանր արհեստավորների մասսաները քայլամբ ան են հասցվում:

Բանվորների, գյուղացիների, արհեստավորների և մանր բուրժուազիայի մյուս խավերի կենսական մակարդակի իջնցումը նշանակելիորեն կրծատեց Գերմանիայի ներքին շուկան: Ներքին շուկան նեղացնելը դժվարացնում է լայն սպառման առարկաների վաճառահանումը, մեծ դժվարություններ և ստեղծում արտադրության շատ ճյուղերի համար:

Զնայած բնակչության աճմանը (տարեկան միջին աճը՝ 300 հազ. մարդ), 1935 թ. Սաարի մարզը Գերմանիայի կազմի մեջ մտցնելուն, արտադրած սպառման առարկաների մասսան զգալի կրծատվեց: Յեթե 1929 թ. արտադրված սպառման առարկաների ընդհանուր մասսան ընդունենք 100, ապա այդ առարկաների արտադրությունը 1934 թ. կկազմի 92,4%, 1935 թ.—88,2%, 1936 թ. (առաջին կիսամյակում)

94,8%, իսկ 1937 թ. (1928 թ. արտադրության համեմատությամբ) լի կվարտալում՝ 96,5%: Հարկ և նաև հաշվի առնել, վոր սպառման այդ առարկաների թվի մեջ մտնում են հագուստեղենը, կոչկեղենը և այլ ապրանքներ, վորոնցով մատակարարվում ե բանակը:

Լայն սպառման առարկաների արտադրանքի իջեցման մասին խոսում են նաև ուրիշ փաստեր: Գերմանական «Կրեդիտագեղելշաֆտ» բանկի տեսության տվյալների համաձայն, Գերմանիայի տեքստիլ արդյունաբերությունը 1937 թ. բեռնավորված եր իր արտադրական կարողության միայն 60%-ով, կարի արդյունաբերությունը՝ 56%-ով: Սպառման առարկաներ արտադրող մի շարք այլ ճյուղեր բեռնավորված են ավելի պակաս, քան մինչկրիզիսյան 1928 թվին:

Այս հանդամանքները գժգոհություն են առաջնում վոչ միայն աշխատավորների մեջ, այլև բուժություղիայի վորոշ խավերի մեջ:

Արդյունաբերությունը Գերմանիայում վերջին տարիների ընթացքում զարդանում եր գլխավորապես արտադրության միջոցների արտադրության հաշվին; Նույնիսկ ավելի ճիշտ կլինի ասել, վոր արտադրությունը զարգանում եր վոչ թե ի հաշվի արտադրության միջոցների մշակման ընդհանրապես, այլ ի հաշվի ավերածության միջոցների, ի հաշվի պատրաստվող և մատամբ տարվող արգեն պատերազմի սպասարկման: Նույնիսկ բուժությունական լրագրերը նշում են այն փաստը, վոր գերմանական արդյունաբերությունը սպասարկում ե գլխավորապես պատերազմի նպատակներին:

«Արդյունաբերական աշխատացումը Գերմանիա-

յում կազմված ե համարյա բացաբանակապես սպառազինումների հետ... Այն ժամանակ, յեր գերմանիան հանդերձում եր վերին աստիճանի մեքենայացված մի մեծ բանակ, կառուցեց ողային խոչը նավատորմիզ, ստեղծում ե նոր ծովային նավատորմիզ և համարյա վերջացրել ե իր նոր ճանապարհները, կամուրջները,—17 միլ. նրա աշխատավոր բնակչությունը, մասնավոր անձները այլևս հագուստ չեն ձեռք բերում և մեծ քանակությամբ սնունդ չեն գործածում»,—դրում եր անդիմական լիբերալ «Մանչեստեր Փարզիան» լրագիրը 1936 թվին:

Տնտեսության ռազմականացումը ծնեց հումքի սուր պակասորդ: Հումքը, վորը գտնվում ե արտասահմանում, նախորոշվում ե առաջին հերթին ռազմական արդյունաբերության պահանջները բավարարելու համար: Այդ պատճառով առանձնապես սուր կերպով ե շոշափելի դասնում հումքի պակասը սպառման առարկաների արտադրության բնագավառում:

Արտադրության այն ճյուղերի արդյունաբերությունների մեջ, վորտեղ ամենից ավելի յե զգացվում հումքի պակասը, խիստ գժգոհություն կա: Ել ավելի յե զգացվում նաև այս խավերում գժգոհություն ավտարկիայի՝ Գերմանիան համաշխարհային շուկայից անջատելու քաղաքականությունից:

Ֆաշիստական գիկտատուրայի հնդամյակի բարձանուցույց ե տալիս սպառազինումների խիստ աճում, լայն աշխատավորական մասսաների կյանքի մակարդակի նույնքան իսկ խիստ իջեցում: Յեթե առաջ Փաշիստական կառավարիչներն առաջադրում երին «թնդանոթներ» յուղի փախարեն» լոգունդը, ապա վեր-



ջին ժամանակս նրանք ավելի հաճախ են խոսում հացի սպառումը կրծատելու անհրաժեշտության մասին։ 1937 թվին, «բերքի տոնի» ժամանակ արտասանած իր ճառում Հիտլերը աներկմտորեն շեշտեց այդ խնդիրը—կրծատել հացի սպառումը։ Ավտարկիայի քաղաքականության և տնտեսությունը կատարելապես պատերաժմի նպատակներին յենթարկելու հետևանքով Փաշխտական կառավարությունը հարկադրված յեղավ կարգելորադույն մննդամթերքների սպառման խիստ կարգավորմանն անցնելու։ Այս ամենը գերմանական ժողովրդի լայն մասսաներում առաջացնում է աճող դիմադրություն Փաշխտական ոեթիմին։ Շարունակ ուժեղանում է մասսայական դժգոհությունը Փաշխտական դիկտատորայի տիրապետությունից։ Այս դժգոհությունն ընդգրկեց վո՛չ միայն աշխատավորներին, մասր բուրժուազիային, այլև խոչոր բուրժուազիայի առանձին խավերին և գերմանական բանակի զեկավարությանը։

Տիրապետող բուրժուազիայի միքանի, ավելի զգասու ներկայացուցիչներ տաղնապ են կրում Փաշխտական տիրապետության հանրագումարների առթիվ, դժգոհություն են արտահայտում Հիտլեր—Գյուրինդի քաղաքականությունից։ Այս հողի վրա զարգանում է պայքարը հենց զեկավարող կլիկայի մեջ։

Ֆաշխտական գերմանիայի զեկավարող շրջանների այս պայքարում թագնված է 1938 թ. հունվար—փետրվարին տեղի ունեցած դեպքերի պատճառը։

\* \* \*

Ինչպես ելին տեղի ունենում այդ գեղքերը։  
Բայցսվերի շրջաններում յեղած դժգոհությունը

արտահայտվում եր վոչ միայն առանձին հայտարարությունների ձևով, այլև ընդունում եր նշանակելիութեն ավելի ակտիվ ձևեր։ Ահա՝ թե ինչ է հաղորդում այդ մասին «Թան» լրագիրը։

«Գեներալ Փոն Ֆրիչը իրեն մոտ հրավիրեց ուրիշ գեներալների նրա համար, վորպեսզի նրանց հետ մեկտեղ նշի գեստապոյի հարձակմանը դիմադրելու պլանը։ Հունվարի 28-ի առավոտը ուսայիսվերի վաշտը գրավեց Վիլհելմշտրասեյի վրա գտնվող № 64 պալատի շենքը, Հիտլերի գրասենյակի մոտակայքում։ Դրանով գեներալ Ֆրիչը ուզում եր Հիմմերին\* ցույց տալ, թե ինքը պատրաստ է դիմադրություն ցույց տալ, ուժին պատրաստ է ուժով պատասխանելու։ Միաժամանակ միջոցներ ձեռք առնվեցին նրա համար, վորպեսզի միքանի ստրատեգիական կետեր մայրաքաղաքում գեստալոն չգրավեր։ Հունվարի 28-ի և 29-ի որերը թեղինում ընթացան տեսորի պայմաններում։ Նշանակոր մարդկանց նշանակելի մասը, վորը քիչ թե շատ մասնակցել եր գեներալների գավաղըռությանը, շատապով թողեց մայրաքաղաքը։ Հունվարի 29-ի յերեկոյան հայսնի գարձավլ, վոր Հիտլերը ստորագրել է հիմմերգին հրաժարեցում տալը, վորը պահանջում եր ուսայիսվերը, և միաժամանակ ստորագրել է գեներալ Ֆրիչի հրաժարեցման հրամանը։ Ֆրիչը հունվարի 30-ին, յերբ նրան հայտնեցին իրեն հրաժարեցում տալու մասին, ուզեց հասկացնել, վոր ինքը չի ել մտածում յենթարկվել այդ հրամանին։ Հունվարի 31-ին իրադրության լարվածությունն ուժեղացալ։

\* Հիմմեր—գեստապոյի պետը։

Հենց այդ մոմենտին բեմի վրա յերեան և գալիս վորպես միջնորդ ռայխալերի ու Հիտլերի միջև դեներալ կեյտելը: Կեյտելը գերմանական ռազմական շրջաններում աչքի ընկալ այն մոմենտից, յերբ Ֆրիչի փոխարեն նրան հանձնարարվեց մանյովըների հրամանատարությունը: Հունվարի 31-ին գեներալ Կեյտելը սկսեց բանակցություններ վարել Հիտլերի հետ: Այդ բանակցությունների յերակետը գեներալ Ֆրիչի և գավաղը բության մասնակից այլ անձերի հեռացնելու համաձայնությունն եր: Փետրվարի 1-ին Հիմմերն անձամբ ներկայացալ Ֆրիչին և հայտարարեց նրան Հիտլերի հրամանը նրան ձերբակալելու մասին»:

Այսպես և նկարագրում դեպքերը Փրանսական «Թան» լրագիրը:

Իսկ փետրվարի 5-ին Փաշիստական մամուլը հրապարակեց հաղորդագրություն այն մասին, թե Հիտլերը Ֆրիչի և Բլոմբերգի հրաժարեցման համաձայնությունը տվեց նրանց առողջության վատ վիճակի կապակցությամբ: Այդ նույն օրը մամուլում համուս յեկալ Հիտլերի՝ վերը մեջբերված կեղծալոր դիմումը Ֆրիչին: Այդ դիմումը հրապարակվեց միքանի որ անց այն բանից հետո, յերբ Ֆրիչը Հիտլերի կարգադրությամբ ձերբակալված եր:

Եերկրում լարված վիճակ ստեղծվեց: Ֆրիչի ձերբակալությունը ուժեղ հուզմունք առաջացրեց ռայխավերի շարքերում: Դեռ մինչև փետրվարի 4-ը Բավարիայում, չեխոսլովակյան «Հալլո Նովինի» լրագրի հաղորդագրության համաձայն, ձերբակալվեց մոտ 300 սպա: Բազմաթիվ սպաներ փախան արտասահման՝ վախենալով ռեպրեսիաներից: Բեռլինում և Պրուսիա-

յի, Բավարիայի շատ քաղաքներում ու այլ մարզերում մասսայական խուզարկություններ և ձերբակալություններ կատարվեցին սպաների մեջ:

Այդ նույն «Հալլո Նովինի» լրագիրը հաղորդում է, վոր հունվարի 31-ին և փետրվարի 1-ին Արևելյան Պրուսիայում «Պողպատե սաղալարտ» (նաշինալիստների կուսակցության մարտական կազմակերպություն, վորը գոյություն ուներ մինչև Փաշիստների իշխանության գլուխ անցնելը) կազմակերպության նախկին բոլոր անդամները զինաթափակցին և խստ հսկողության տակ առնվեցին: Շատ հերմականների խմբերից մեկը սկսեց բարեկարգներով վակվել զորանոցներում և կատեգորիկ կերպով հրաժարվեց զենքը հանձնել: Բանը հասալ փոխհրաձգությունների, վորի հետևանքով 3 մարդ սպանվեց և 11 մարդ վիրավորվեց: 16 բենատար ավտոմոբիլներով գեղքի վայրն ուղարկվեցին լավ զինված Փաշիստական պահնորդների զոկատներ («ՏՏ»):

«Ձենտրալ նյութ» գործակալությունը Վարչավայրից հաղորդում է, թե Գլայցեվիցում և Արևելյան Գերմանիայի ուրիշ քաղաքներում հակաֆաշիստական խլոտումներ բռնկեցին. Արևելյան Պրուսիայում և Սիւլեզիայում լայնորեն տարածվում են հակաֆաշիստական թերթիկներ «Կորչի՛ Հիտլերյան ռեժիմը» լոգունդով:

Այդ նույն հաղորդագրությունների համաձայն Ալենցտայնի կայազորում, Արևելյան Պրուսիայում, սպայական կորպուսը թույլ չտվեց ստուգման յենթարկելու հրամանատարական կազմի քաղաքական բարեհուսությունը: Կայազորի ավագ սպաները հրաժարվե-

ցին ստուգիչ հանձնաժողովն ընդունելուց և նրա հարցերին պատասխանելուց: Արևելյան Պրուսիայի գեոտապոյի տեղական որդանները Բեռլինից վոստիկանական ողնություն խնդրեցին: Կատարվեցին մասսայական ձերբակալություններ:

Ինչպես հաղորդում ե «Դեյլի Տելեգրաֆ ենդ Սորնինդ Պոստ» լրագրի Բեռլինի թղթակիցը՝ Փաշխատական ըլջաններում շատ եյին վախենում գժգոհության հետագա տարածութից բանակում: Այս կապակցությամբ ստեղծվեցին խառը հանձնաժողովներ ռայխսվերը և պետական ապարատը զտելու համար: Յերկիրը փաստորեն փետրվարի այդ որերին ռազմական գրության մեջ եր գտնվում: Բանակում դադարեցվեցին բոլոր արձակուրդները: Անդլիական և Փրանսական լրագրերը Գերմանիա մտցնել թույլ չեյին տալիս: Դրանք պահպան եյին սահմանում:

Այսպես ե իրական պատկերն այն գեղքերի, վորոնք թագնված եյին Փաշխատական մամուլի անմեղ հաղորդադրությունների հետևում՝ գերմանական կառավարության կազմում կատարված տեղափոխումների մասին, միքանի դառամյալ գեներալներին հրաժարական տալու մասին և Փաշխատական ուժիմի իր թետեղի ունեցած ամրապնդման մասին:

\* \* \*

Իսկ ինչպիսի՝ արմատական տեղափոխումներ տեղի ունեցան գերմանական կառավարության կազմում, և ի՞նչ ե թագնված նրանցից յուրաքանչյուրի հետեւում:

Ինչպես մենք արդեն նշեցինք, այդ տեղափոխումներն ամենից առաջ վերաբերեցին ռազմական գերա-

տեսչությանը: Պաշտոնաթող յեղավ ռազմական մինիստր Բլոմբերգը: «Զինված ուժերի գերազույն հրամանատարության» ղեկավար (մի պաշտոն, վորը համապատասխանում է ռազմական մինիստրին) նշանակված ե գեներալ Կեյտելը: Բանակի գլխավոր հրամանատար՝ պաշտոնաթող յեղած գեներալ Ֆրիչի տեղը գրավեց Հրետանու-գեներալ Փոն Բրաուխիչը, վորը միաժամանակ ստացավ գեներալ-գնդապետի աստիճան: Նշանակված ե ռազմա-ծովային ուժերի նոր պետ՝ Ռյուգելը: Բրաուխիչի փոխարեն Խ զինվորական խմբի գերազույն պետ նշանակվել ե Փաշխատական գեներալ Խայլիսենաուն: Խ զինվորական խմբի զինվորական պետ ե նշանակված Հրետանու-գեներալ Լիստը:

Պաշտոնաթող յեղած գեներալ Բլոմբերգը ռազմական մինիստրությունը գլխավորում եր Փաշխատական դիկտատորայի առաջին որերից: Հինգ տարի շարունակ Բլոմբերգը ույլավերի գեներալիտետի և Փաշխատական կուսակցության միջև միջնորդի միսիան եր կատարում: Այն հանգամանքը, վոր Հիտլերն իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո Գերմանիայի մաքսիմալ սպառազինման ուղղությունը բռնեց, թեթևացրեց Բլոմբերգի կողապես միջնորդի գերը: Վերջին գեր չխաղաց Բլոմբերգը գրոհային ջոկատներում 1934 թ. ամառը տեղի ունեցած գժգոհությունը ճշնչելու մեջ: Վոչ այլ վոք, քան Բլոմբերգը, այն ժամանակ «Ֆյուլկիչեր Բեռնախտեր»-ում զետեղված իր հողվածում կոչ եր անում գրոհային ջոկատների ղեկավարության դատաստանը տեսնել:

Ռեմի և գրոհային ջոկատների մյուս ներկայացու-

ցիշների արյունոտ դաստաստանը բավարարեց ռայլիսս-վերին, և թվում եր, թե կոնտակտը ռայխսվերի և Փաշխստական կուսակցության միջև հաստատված է։ Սակայն վերջին որերի գեպքերը Գերմանիայում վկայում են այն մասին, վոր այդ կոնտակտը, վոր առաջներում ել հաստատուն չեր, այժմ հիմնականութեն խախտված է։ Ստեղծված պայմաններում Բլոմբերգը չկարողացավ այնուհետև կատարել միջնորդի և հաշտարարի միսիան զինվորական շրջանների և Փաշխստական կուսակցության միջև։ Նրա գերը սպառված եր, և Բլոմբերգին հրաժարական տվյալն է՝ վո՞չ թե Բլոմբերգի զառամյալ հաճակը կամ թույլ առողջությունը, վո՞չ թե նրա ամուսնությունը վոչ-բավականաչափ բարձր ծագում ունեցող կնոջ հետ առաջացրին այդ հրաժարեցումը, — այդ հրաժարեցումը առաջացրին Փաշխստական բանակում սրվող հակասությունները, մասնավորապես հակասությունները զինվորական շրջանների ու Փաշխստական կուսակցության միջև։

Ո՞վ է գեներալ Բլոմբերգին փոխարինող հրետանութեներալ Կեյտելը։ Գեներալ Կեյտելը իր առաջին սպայական աստիճանը ստացել է 1901 թվին. իմպերիալիստական պատերազմի սկզբին նա ֆրոնտում մարտկոցի հրամանատար եր։ Կեյտելի առաջարժումը պաշտոնեալական աստիճանով սկսվեց Փաշխստական ռեժիմ հաստատվելուց հետո միայն։ 1934 թ. ապրիլին Կեյտելը բարձրացվեց գեներալ-մայորի աստիճանի և նշանակվեց զինվորական ոկրուգի հրամանատար. այդ ժամանակ Հիտլերն այցելեց նրան և միքանի որ անցկացրեց նրա ղեկավարած զինվորական մասերում։

Բանակը վերակազմելուց հետո Կեյտելը ստացավ հետագա առաջարժումը և նշանակվեց ռազմական մինիստրության ռազմա-քաղաքական վարչության պետ։

Այդ գեներալը, վորը մինչ Փաշխստական գիլտատուրան քիչ եր հայտնի, այժմ նշանակված և «գինված ուժերի գերագույն հրամանատարության» ղեկավար։ Հիտլերի հետ ունեցած կապերը, ինչպես յերեսում են, հանդիսանում են այն հիմնական արժանիքը, վորն ոժանդակեց նրա առաջիսաղացմանն ընդհուպ մինչև սպազմական մինիստրի պոստը։

Ծավալված գեպքերում ե'լ ավելի ակտիվ գերխաղաց, ինչպես մենք տեսանք, նախկին գլխավոր հրամանատար գեներալ Ֆրիչը։ Ռայխսվերի հրամանատարության չարգերում Ֆրիչն ամենից ավելի աչքի ընկնող Փիգուրն եր։ Նա համարվում է 1934 թ. գեկտեմբերին վախճանված գեներալ Սեկտի՛ ժամանակակից գերմանական բանակի կազմակերպչի՝ ամենից ավելի ընդունակ աշակերտներից մեկը։

Ֆրիչի և Հիտլերի միջև արգեն վաղուց նշմարվել են լուրջ տարածայնություններ գերմանական բանակը վերակազմելու մասին յեղած հարցում։ Ֆրիչը հանդես յեկավ բանակի զարգացման չափից զուրու արագացման դեմ։ Նա բազմից հանդես եր գալիս զինվորական միավորումները ծավալելու ավելորդ աճապարանքի դեմ, վոր անբարենպատորեն և անդրադառնում ձեւվավորված մասերի վորակական կազմի վրա։

1935—1936 թ.թ. Հիտլերի ու Ֆրիչի միջև հաճախ տեղի եին ունենում ընդհարումներ՝ Հիտլերի կարծիքով նոր բանակը վոչ-բավականաչափ արագ ձեւվորելու հողի վրա։ Հիտլերը պահանջում էր, վոր

1937թ. հունվարի 1-ին ձեւավորված լինեն 50 դիվի-  
դիս, այսինքն, ուղում եր, վոր բանակը քանակով  
հասցվի պատերազմական ժամանակի մակարդակին։  
Մինչդեռ հսկայական լարվածությամբ հաջողվեց ձե-  
վագորել 1936 թ. ընթացքում միայն 36 դիվիզիա։  
Ֆրիչն աներկմտորեն դժողովություն արտահայտեց  
Փաշխտական կառավարության արտաքին քաղաքա-  
կանությունից, վորը մղում է դեպի բանակի զարդաց-  
ման չափից դուրս արագացման ուղին, առանց առկա  
հնարավորությունները պատշաճորեն հաշվի առնելու։

Դերմանական գեներալիտետը չկարողացավ նույն-  
պես միանդամայն անմասնակից մնալ՝ զորանոցնե-  
րում, զինվորների մասսաներում յեղած այն տրամա-  
դրություններին, վորոնք բանակի ամրությանը լուրջ  
սպառնալիք են ներկայացնում։ Ֆրիչը զգաստորեն  
գնահատեց Հիտլերի ավանդուրիստական քաղաքակա-  
նությունն արտաքին քաղաքականության հարցերում,  
սպառազնումների ավանդուրիստական մեթոդները։  
Ուստի Ֆրիչը հեռացվեց բանակի դեկավարությունից  
և ձերբակալվեց։

Գեներալ Ֆրիչին գլխավոր հրամանատարի պոս-  
տում փոխարինեց գեներալ Փոն Բրաուխիչը։ Փոն Բրա-  
ուխիչը գեներալական ընտանիքից է ծագում։ Իր առա-  
ջին սպայական աստիճանը նա ստացել է 1900 թվին։  
Համաշխարհային պատերազմի ժամանակ Փոն Բրաու-  
խիչը գտնվում էր արևմտյան Փրոնտում։ Մինչև վեր-  
ջին նշանակումը Փոն Բրաուխիչը գեներալ-լեյտենանտի  
աստիճանով ԱՎ զորական խմբի հրամանատարն էր։

Փոն Բրաուխիչի փոխարին ԱՎ զորական խմբի  
հրամանատարի պոստում նշանակված է գեներալ Ռայ-

խենառուն։ Այս նշանակումը աստիճանի հասարակ  
բարձրացում չե։ այդ բարձրացումը վկայում է այդ  
գեներալի ներկայացրած վորոշ ստրատեգիական կողմ-  
նորոշման հաղթանակը։ Գեներալ Ռայխենառուն հայտ-  
նի յե վորապես կայծակի արագությամբ հարվածի  
թեորիայի հետևողություն թեորիան այդ թեորիան զար-  
գացնում եր գլխավորապես Զեխոսուրվակիայի վերա-  
բերմամբ։ Այդ պատճառով հասկանալի յե, վոր Ռայ-  
խենառույին՝ Զեխոսուրվակիայի սահմանի վրա տեղա-  
վորված գերմանական զորքերի հրամանատարի պոս-  
տում նշանակելը տաղնապ առաջացրեց չեխոսուրվա-  
կիան մամուլում։ Զեխոսուրվակիան լրագրերի մեծ մա-  
սը «Լիդովի նովինի»-ից արտատպեց ուազմական մաս-  
նագետ Ստանիսլավ Ֆեստերի գրչին պատկանող այն  
հոդվածը, վորի մեջ ասվում է։

«Գեներալ Ռայխենառույին ԱՎ զինվորական շրջանի  
հրամանատար նշանակելը նշանակում է նրա ծառա-  
յությամբ բարձրանալը, իսկ մեզ համար (այսինքն  
Զեխոսուրվակիայի համար։ Ա. Բ.) նշանակում է այն  
փաստը, վոր մեր հյուսիս-արևմտյան սահմանի հրա-  
մանատարը նացիոնալ-սոցիալիստ մի գեներալ է, վո-  
րի համար կուսակցության կամքը հեշտությամբ կա-  
րող է հաղթանակել զդաստ ստրատեգիական նկատ-  
ումներին»։

Կարծես թե ի հաստատումն այդ բանի՝ Ռայխե-  
նառույի նոր պոստում հանդես գալը հավերժացվեց  
գերմանական ռազմական ինքնաթիւի դեմոնստրատիվ  
թուչքով չեխոսուրվակիան տերիտորիայի վրա։ Թուչ-  
քը տեղի յեր ունենում փոքր բարձրության վրա և  
չեր կարող սխալմամբ առաջացած լինել, վորովհետեւ

կատարվում եր բացառապես պարզ յեղանակի ժամանակ:

Այսպիսի տեսք ունեն ուազմական գերատեսչության գծով յեղած հիմնական տեղափոխումները: Ինչպես տեսնում ենք, նրանք կապված են այն մարդկանց հեռացնելու հետ, ով դժողովություն եր արտահայտում Հիտլերի ավանոտուրիստական արտաքին քաղաքականությունից: Այս տեղափոխումները հետապնդում են մի նպատակ՝ հեռացնել բոլոր նրանց, ովքին անդարձում ե մեծ հավիշտակողական պատերազմի նախապատրաստումն արագացնելուն ու սկսելուն, պատերազմ, վորը ֆաշիստական քաղաքականության դլապոր նպատակն է:

Լիովին չվստահելով բանակի հրամանատարությանը, Հիտլերը անհուսալի մարդկանց հեռացնելուց հետո իրեն՝ Գերմանիայի բոլոր զինված ուժերի հրամանատար հայտարարեց:

Ռազմական գերատեսչության գծով յեղած տեղափոխումների հետ մեկտեղ խոչըր փոփոխություններ ելին տեղի ունենում արտաքին գործերի մինխարության մեջ: Պաշտոնաթող յեղած՝ արտաքին գործերի մինխարտ Նեյրատի փոխարեն այդ պոստում նշանակված ե Անդլիայի նախկին դեսպան Ռիբենտրոպը: Ռիբենտրոպի անունը լավ հայտնի յե ընթերցող հասարակությանը: Բոլորը հիշում են նրա ակտիվ դերը գերման-ճապոնական ուազմական դաշինքի այսպես կոչված հակակոմինտերնական պակտը կնքելու մեջ: Այդ այն Ռիբենտրոպին ե, վորը Գերմանիայի անունից ստորագրեց Խտալիան այս ուազմական դաշինքին միացնելու պայմանագրի տակ: Այդ նա յե, վոր

մասնակցելով՝ չմիջամտելու կոմիտեյի մեջ, ամեն կերպ վիճեցնում եր այդ կոմիտեյի աշխատանքը, իսպանիայի ինտերվենտների գործողությունները հեշտացնելու համար:

Ռիբենտրոպի նշանակումը գերմանական արտաքին քաղաքականության ազգեսիվության նոր ուժեղացում ե նշանակում:

Խորհրդային Միության աշխատավորները հաշվի կառնեն, իհարկե, բոլոր այն հետևանքները, վորոնցով կարող ե ուղեկցվել արտաքին գործերի գերմանական մինխարության դեկադարության այդ փոփոխումը:

Կարենը փաստ է նույնպես գերմանական դեսպանների հետկանչումը յերեք յերկրներից՝ Խտալիայից, Ճապոնիայից ու Ավստրիայից, վորոնց հետ Գերմանիան ակտիվ դիվլոմատիական հարաբերությունների մեջ ե գտնվում: Նրանց հետկանչումը նույնպես կապում են այն բանի հետ, վոր նրանք վոչ-բավականաչափ ակտիվություն հանդես բերեցին արտաքին քաղաքականության մեջ ամենից ավելի ազբեսիվ գիծ իրականացնելու մեջ:

Արտաքին գործերի մինխարության մեջ յեղած անձնական տեղափոխումների հետ միաժամանակ հաստատված ե ևս մեկ նորություն Գերմանիայի արտաքին քաղաքականության դեկադարության մեջ: Հիտլերին կից ստեղծվել ե «գաղտնի խորհուրդ» արտաքին քաղաքականության հարցերի շուրջը: Այդ «գաղտնի խորհրդ» կազմի մեջ՝ արտաքին գործերի մինխարության պաշտոնեյական անձանց հետ մեկտեղ մտցված են Փաշիստական կուսակցության դեկադար-

ներ՝ Հեռուը, Գյորինդը, Գերբելը և ռազմական հրամանատարության յերեք ներկայացուցիչներ՝ Կեյտելը, Բրաուլիչը, Ռեդերը:

Արտաքին քաղաքականության գործերի «դաշտնի խորհրդում» ռազմական հրամանատարության յերեք ներկայացուցիչներին մտցնելը առանձնապես ե լնդդժում Գերմանիայում տեղի ունեցող դեպքերի իմաստը: Այդ յերեք գեներալներին խորհուրդ մտցնելը կօմպոնմիսի հասարակ փորձի և ռայխսվերի ու Հիտլերի միջև յեղած խախտված կոնտակտի վերականդնում չե, ինչպես այդ ջանում են բացատրել ոտարերկրյա միջանի լրագրեր: Այդ ամենից առաջ վկայում ե, վոր Հիտլերի արտաքին քաղաքականությունը դառնում ե ե՞լ ավելի աղբեսիլ, ե՞լ ավելի յե յենթարկված պատերազմի նախապատրաստման գործին:

Հենց նույն նպատակը, այն ե՝ յերկրի ամբողջ տնտեսական-քաղաքական կյանքը պատերազմի նախապատրաստման գործին յենթարկելը, հետապնդում են տնտեսության մինիստրության միջ կատարված թե տեղափոխումները, թե վերակազմումները: Ինչպես հայտնի յե, 1937 թվին, Շախտի հրաժարեցումից հետո, տնտեսության մինիստր նշանակվեց Ֆունկը, վորը մինչ այդ պրոպագանդայի մինիստրության պետական քարտուղարն եր: Տնտեսական քաղաքականության բնագավառում նա աչքի ընկալ վորպես ավտարկիայի կողմնակից: Ինչպես պնդում ե հավաստի ժուռնալ «Դինոյե Վելոբյունե»-ն 1938 թ. փետրվարի 10-ի համարում, Գերմանիայի արդյունաբերական շրջանները անբարյացակամորեն դիմավլորեցին Ֆունկի նշանակումը վորպես տնտեսության մինիստր և բողոքում եյին այդ:

Նշանակման դեմ: Ֆունկը պետք ե իր պարտականությունների կատարմանն անցնել 1938 թ. հունվարի 15-ին, իսկ իսկապես անցավ միայն 1938 թվի փետրվարի 4-ին: Շախտին հեռացնելու մոմենտից մինչև փետրվարի 5-ը տնտեսության մինիստրությունը վարում եր Գյորինդը: Ոտարերկրյա միքանի լրադրերի կարծիքով Ֆունկին հետազում ևս նախորոշված եր «դիկտատոր Գյորինդի տեղակալի» դերը: Շախտին հեռացնելուց մինչև փետրվարի 4-ը Գյորինդը «կարգավորում եր» տնտեսության մինիստրությունը: Շախտի որով աշխատող՝ այդ մինիստրության նախկին չինովնիկների մի մեծ քանակության առաջարկվեց հրաժարական տալ: Նրանց փոխարեն տնտեսության մինիստրության բաժինների ու յենթաբաժինների գլուխ կանգնեցին գլխավորապես ռազմական մասնագետները: Ահավասիկ նոր նշանակումներից միջանիսը:

Արդյունաբերական բաժին (հումքային և արհետագործական արտադրանք): Գետը ավիացիայի դեներալ-մայոր Լեբն ե:

Լեռնային արդյունաբերության, յերկաթի, եներգետիկայի բաժին: Պետը գեներալ-մայոր Փոն Հաննեկենն ե:

Արտաքին առեւտրի, դեվիզների, եքսպորտի բաժին: Մինիստրիալ գիրեկառըն և պաշտոնաթող յեղած մայոր Փոն Յագիլացը:

Տնտեսական շինարարության (հետազոտություն, պլանավորում, «քառամյա պլանի» կատարում) կայսերական բյուրո: Գլխավորում ե գլխավոր շտարի մայոր ինժեներ Յիմատիսը:

Այդ բյուրոյի բաժինը (պլանավորում և պլանի կերպում)։ Գլխավորում է մայոր ինժեներ Գեյստը։

Այս նշանակումները բացահայտորեն ցույց են տալիս վերակազմության նպատակը—տնտեսությունը նախապատրաստվող պատերազմի պահանջմունքներին հարմարեցնելը։ Տնտեսության մինիստրության վերակազմության բնույթը հենց առում է այն մասին, վոր Գերմանիայի ամբողջ տնտեսությունը դրվում է ի սպաս պատերազմին։

Սպառազինումների հետեւեց ընկած այս առվանտուրիստական քաղաքականությունը, ամբողջ տնտեսությունը պատերազմի նպատակներին յենթարկելն ի վնաս տնտեսական զարգացման՝ ել ավելի մեծ դժուճություն է առաջացնում Գերմանիայի նույնիսկ կառավարող շրջաններում։ Հիտլերը ջանում է ազատվել այդ դժուճությունից դժուճներին հեռացնելով ու ձերբակալելով։

Նույնիսկ բուրժուական դիտողները ընդունում են, վոր դեպքերը Գերմանիայում՝ նրանում սրվող հակասությունների ցուցանիշն են հանդիսանում։ «Գերմանիան հանդիսաւ է ինչպես լցված թնդանոթը», — նշում են նրանք։

\* \* \*

1938 թ. հունվար—փետրվարին Գերմանիայում տեղի ունեցող դեպքերը Փաշխատական դիկտատուրայի հնգամյա գոյության անխուսափելի հետեւանքն են։

Փաշխատական դիկտատուրան կատարում է խոշոր բուրժուազիայի ամենից ավելի ռեակցիոն, իմպերիալիստական շրջանների կամքը։ Բայց բուրժուազիայի

առանձին խավերի մեջ ել աճում է տագնաալը Փաշխատական տիրապետության հինգ տարվա հանրագումարների առթիվ, և այն դժվարությունների առթիվ, վորոնց հանդեցրեց այդ տիրապետությունը։ Փաշխատական Գերմանիայում առանձին զեկավար խմբերի միջև յեղած պայքարն արտացոլում է բուրժուազիայի տաղնապան այդ դժվարությունների առթիվ և այդ դժվարություններից յելք փնտոելու վորոնումները։

Փաշխզմի զեկավար լագերում այսպես կոչված չափավոր հոսանքը, վորն այժմ ջախջախվել է Հիտլերի կողմից, — ծախտը, Ֆրիչը և ուրիշները, — արտահայտում եր այն հետեւանքների յերկյուղը, վորոնց կարող և հանդեցնել Գերմանիայի ավանդյուրիստական քաղաքականությունը։ Քանի վոր այն ֆոկուրը, վորի մեջ կենտրոնացվել է ամբողջ Փաշխատական քաղաքականությունը, ուղղմական ավանդյուրաների խստորեն արտահայտված քաղաքականությունն և հանդիսանում, ապա այդ կետի գեմ եր, առաջին հերթին, հենց ուղղված «չափավոր հոսանքի» դժուճությունը։

Այժմ, այդ հոսանքի ներկայացուցիչներին հեռացնելուց հետո, Հիտլերը հեշտացրեց մոտ ժամանակում ուղղմական ավանդյուրաների քաղաքականության հետագա զարգացումը։ Այս բանն անխուսափելիքըն պետք է հանդեցնի Փաշխատական Գերմանիայում հակասությունների հետագա աճմանը։

Այդ պատճառով հենց զեկավար վերնախավում յեղած դժուճների հետ տեսած դատաստանը և դրա առաջացրած նշանակելի տեղափոխումները գերմանական կառավարության մեջ՝ այդ դժվարությունների

գերացման ցուցանիշ վոչ մի կերպ չեն հանդիսանում: Դժգոհների հետ տեսած դատաստանի այն մեթոդը, վորբն դիմեց Հիտլերը, լիկվիդացիայի չի յենթարկում այդ դժգոհության պատճառները: Ընդհակառակը, միանդամայն անխուսափելիորեն ստեղծվում են պայմաններ հետագայում դժգոհությունների աճման համար: Ֆաշիստական գիլտատուրայի բազանքանի գնում նեղանում ե:

Այս ե Գերմանիայի հունվար-վիետրվարյան դեպքերից արած հիմնական յեղակացությունը:

Յերկրորդ յեղակացությունն այս գեղքերից այն է, վոր ֆաշիստական կառավարությունը, կատարելով գերմանական բուրժուազիայի ամենից ավելի ագրեսիվ խավերի կամքը, «չափավոր հոսանքի» հետ հաշիվը տեսնելով իր շրջապատում, ել ավելի մեծ յեռանդով կուսի նախապատրաստել «ամբողջական» պատերազմը: Այս ճանապարհին գերմանական ֆաշիստները յերկրի ներսում աճող դժվարություններից յերք են վնասում և ել ավելի կինուեն:

Իտալմական մինիստրության, արտաքին գործերի մինիստրության և տնտեսության մինիստրության բոլոր կատարված վերակազմումները, բոլոր այս անձնական տեղափոխումները մի նպատակ են հետապնդում՝ ուժեղացնել պատերազմի նախապատրաստությունը:

Գերմանիայի կոմունիստական կուսակցության կեն գերմանական ժողովրդին ուղղած իր գիմումի մեջ այսպես ե գնահատում վերջին գեղքերը Գերմանիայում.

«Փետրվարի 4-ի գեղքերը ծայրահեղ տագնապա-

նշան և գերմանական ժողովրդի համար: Հիտլերի կառավարությունը նոր ռազմական յերայթներ ե պատրաստում: Այդ կառավարությունը աճող դժվարություններից և յերկրի ներսում ֆաշիստական ռեժիմից յեղած մասսայական դժգոհությունից յելք ե վինտուում դրսի ռազմական ավանդուրանը ավելացների մեջ: Պատերազմի ֆաշիստական կուսակցությունը ձգառում ե պետական ապարատից հեռացնել այն ամենը, ինչ գեր նրա ավանդուրիստական ռազմական քաղաքականությանը արգելք ե ծառայել: Հիտլերն ու Գյորինգը անձամբ իրենց վրա յեն վերցնում ռազմական մեքենայի դեկափարությունը...»

Պետք ե սպասել ել ավելի լիտի վոտնձգություններ Ալստրիայի, Զեխոսլովակիայի վրա... Սանձը կտրած Հիտլերը սլանում ե գեաի պատերազմի գիրկը...»:

Գերմանական կոմկուսակցության այս նախագուշակություններն արգեն հաստատում են գտնում իրականում: Գերմանական ֆաշիզմի ագրեսիվության աճման վառ ձրահայտություններից մեկն են 1938 թ. հենց փետրվարին իսկ ծավալված գեպերը:

\* \* \*

Փետրվարի 5-ի գեղքերից անմիջապես հետո աշխարհը ստանում ե ակնառու ապացույցն այն բանի, թե ինչ են նշանակում այդ գեղքերը: Գերազանցելով «չափավոր» ելեմենտներին՝ ամենից ավելի ագրեսիվ ավանդուրիստական ֆաշիստական կլիկը ուժեղացրած տեմպով ձեռնամուխ ե լինում գերմանական ֆաշիզմի ագրեսիվ պլանների հետագա կատարմանը: Առաջին հարվածներից մեկն ուղղված ե Ալստրիայի դեմ:

Մարտի 11-ի լույս 12-ի գիշերը Ավաստիա ներխուժեց գերմանական բանակը՝ թվով՝ 200-ից մինչև 240 հազար մարդ: Ավաստիան ընկալ Հիտլերի սապոնդի տակ և գաղարեց վորպիս ինքնուրույն պետություն դոյություն ունենալուց:

Իսկ ի՞նչ կերպ Փաշիստական Գերմանիան իրագործեց Ավստրիայի զավթումը:

Քետրվարի 12-ին ավստրիական կանցլեր (կառավարության գլուխը) Շուշնիգը Հիտլերի կողմից շատականչեց Բերլինի գաղթին, Հիտլերի ուղղղենցիան: Շուշնիգի ու Հիտլերի միջև յեղած բանակցություններին մասնակցում ելին նոր նշանակված Փաշիստական զեներալներ՝ Կեյտելն ու Ռայխենառուն, ինչպես նաև արտաքին գործերի մինիստր՝ Ռիբենտրոպը: «Բարեկամական» գրույցների հանրագումարում Շուշնիգին առաջարկվեց անհապաղ վերակազմել ավստրիական կառավարությունը, նրա կազմի մեջ մտցնելով գերմանական Փաշիզմի հովանավորյաներին: Այդ առաջարկը կրում եր ուլտիմատումի բնույթ, ուլտիմատում, վորի ժամկետը լրանում եր փետրվարի 16-ին, յերեկոյան ժամը 6-ին: Շուշնիգը յենթարկվեց Հիտլերու կանոների ճնշումին և Վիեննա վերադառնալուն պես կարինետի նիստ գումարեց: Քետրվարի 15-ին յերկարատև քննարկումից հետո կազմվեց մինիստրների նոր ցուցակ, վորը անմիջապես հրապարակվեց լրադրերում: Սակայն հենց նույն օրը հայտնի գարձավ, վոր Հիտլերի ճնշման ներքո կազմած նոր կառավարությունն ել նրա լիակատար հավանությունը չդառնալու մասի և կառավարության կազմի ցուցակը վոչնչացվում է:

Իր բացասական վերաբերմունքը դեպի կառավարության կազմը Հիտլերն արտահայտեց բավականին սլարդ կերպով և անպատկառորեն: Ավստրիական սահմանի վրա կենտրոնացված գերմանական զորքերը, վորոնք այնտեղ իրը թե ձմեռային մանյովրներ են անում, ազդու ցույց սարքեցին: Ավստրիական կառավարությունը լիովին անձնատուր յեղավ և ընդունեց գերմանական Փաշիստների բոլոր պահանջները: Կազմվեց նոր կառավարության ցուցակ, ընդումին ներքին գործերի մինիստրի պոստում, վորին միաժամանակ յենթարկված են վոստիկանությունն ու ժանդարմերիան, նշանակվեց ուղղակի հիուերյան հովանավոյալ Արտուր Զեյս-ինկլարտը:

Բացի կառավարության կազմի հարցին վերաբերող ուլտիմատումից, Հիտլերն առաջ քաշեց նաև այլ պահանջներ: Ավստրիայում բանտարկված գերմանական Փաշիստների ընդհանուր ամնիստիա, այդ թվում նախկին կանցքեր Դորֆուսին սպանողներին: Թույլ տալ Ավստրիա վերադառնալու 30 հազար ավաստութիւնական լեգիոններներին, վորոնք նորերս վերջացրել են Գերմանիայում ուղղական ուսուցումը, Հիտլերական բանդաների լեգալիզացիան Ավստրիայում, արդեւել ավստրիական մատուրում տեղեկություններ հրապարակել՝ Գերմանիայում կաթոլիկներին հալածելու մասին և այլն: Այս ամենը մեկտեղ վերցրած՝ «սառը խլբառում» հանդիսացավ, ինչպես զրում եր համաշխարհյան մամուլը, մի գործարք, վորը Հիտլերականները ստիպեցին կնքել ավստրիական բուրժուազիային: Շուշնիգը, վորին իշխանության գլուխ եր գրել Ավստրիական «նացիոնալ» Փաշիզմը, ջանում եր խուսանա-

վել Գերմանիայի և Խտալիայի՝ միջև, բայց վերջին  
վերջո անձնատում յեղավ Հիտլերին և համաձայնու-  
թյուն տվեց, համաձայնություն, վորը նշանակելի  
քայլ եր գեպի «յերրորդ կայսրության» կողմից  
Ավստրիային լիովին կլանելը:

Ավստրիայում չգտնվեցին բավականաչափ ուժեր  
Գերմանիայի ազգեստիային հակազդելու համար: Շուշ-  
նիգի կառավարությունը բնավ մտադիր ել չեր հա-  
կազդելու ազգեստիային: Իսկ բանվորական մասսաները  
չնայած վոր ջանում եյին ել դիմադրել Փաշխտական  
ադրբեստիային (առանձին ձեռնարկություններում գոր-  
ծադրություն ու միտինգներ կատարվեցին, մի շարք քա-  
ղաքներում հակաՓաշխտական ազդու ցույցեր տեղի  
ունեցան), բայց բոլոր իրավունքներից զրկված լի-  
նելով, Շուշնիգի կառավարության դաժան հալածան-  
քից հետապնդված, թուլացած լինելով, նրանք ի վե-  
ճակի չեղան խորտակիչ ընդդիմադրություն ցույց  
տալ Փաշխտական հափշտակիչներին: Բոլորը հիշում  
են, թե ինչպես Ավստրիայի Փաշխտական կառավա-  
րությունը ավստրիական բանվորների արյունոտ գա-  
տաստան սարքեց 1934 թ. փետրվարյան մարտերի ժա-  
մանակ: Հետագա տարիներումն ել այդ կառավարու-  
թյունը դաժանորեն պատժում եր աշխատավորներին:  
Հենց դա յեր, վոր թուլացրեց չեղափոխական բան-  
վոր գասակարդի, Ավստրիայի աշխատավորական մաս-  
սաների ուժը:

Հիտլերի փետրվարյան հարձակումը Ավստրիայի  
վրա անսպասելի չեր. այդ հարձակումը պատրաստ-  
վում եր՝ Գերմանիայում Փաշխտաների՝ իշխանության  
գլուխ անցնելու մոմենտից, նպատակ ունենալով ի-

շագութելու այսպես կոչված անշլյուսը, այսինքն  
Եվստրիան Գերմանիային միացնելը: Գերմանական  
Փաշխտաներն արդեն միացնելի տարի առաջ Ավստրիո-  
յում ստեղծեցին ռազմական ջոկատներ, վորոնց գեր-  
մանական Փաշխտաները մատակարարում են գրամով,  
զենքով և այլն: Բավարիայում (Հարավային Գերմա-  
նիա) ավստրիական սահմանի մոտակայքում տեղա-  
վորվեց այսպես կոչված ավստրիական լեգիոնը, զին-  
ված ջոկատներ, վորոնք կազմվել եյին Ավստրիայից  
փախած՝ գերմանական Փաշիզմի կողմնակիցներից ու-  
գործակալներից:

Դեռ 1934 թվին գերմանական Փաշխտաները ջա-  
նում եյին իրականացնել անշլյուսը: 1934 թ. հունիսի  
25-ին ավստրիական հիտլերականների զինված ջո-  
կատները ըրջապատեցին կառավարական հիմնարկները  
Վիեննայում, ներխուժեցին այնտեղ և սպանեցին  
կանցեր Դոլֆուսին: Մյուս Փաշխտական ջոկատները  
գրավեցին ռազմիկայանը և շտապեցին ամբողջ աշ-  
խարչին լուր տալ Դոլֆուսի կառավարությանը հրա-  
ժարեցում տալու մասին և այն նոր կառավարությամբ  
փոխարինելը: Սակայն խոռվարարությունը չհաջողվեց  
և միքանի որից հետո լիկվիդացիայի յենթարկվեց:  
Բայց Հիտլերը զենքը վայր չգրեց. քայլայիչ աշխա-  
տանքն ամեն ժամանակ շարունակվում եր: Այս տար-  
վա սկզբին յերեան հանվեց հերթական դավադրու-  
թյունը, վորը պատրաստվել եր Գերմանիայից յեկած  
ցուցումով: Դավադիրների պլանի համաձայն ավս-  
տրիական հիտլերականները՝ գերմանական իրենց հա-  
մախոհների հետ միատեղ պետք է ավստրո-գերմանա-  
կան սահմանի վրա պրովոկացիոն միջադեպեր սար-

քելին և մի շաբք տեսորիստական ակտեր կատարելին, պորպեսզի առիթ տային գերմանական զորքերին ներխուժելու ավտորիստական տերիտորիան:

Ավտորիստական զավթելու բազմից փորձերի անհաջողությունը չշփոթեցրեց Փաշխտական Գերմանիայի պարագլուխներին:

Հիտլերը «սառը խոռվությունով» չսահմանափակվեց: Բերխտենդաուենի հրամանով կառավարության գերակաղումը ավտորիստական պետության ջախջախման սկիզբն եր, Փաշխտական Գերմանիայի նոր աշանտյուրայի սկիզբը:

Գերմանիայից յեկած ցուցումների համաձայն գերշնականապես կապը կտրած ավտորիստական հիտլերականները արշավանք գործեցին Գրացի վրա, Շտիրիայի (Ավստրիայի հարավային սլրովինցիաներից մեկի) գլխավոր քաղաքի վրա, վորտեղ պետք եւ հանդեռ դար Հիտլերի հովանավորյալը, Ավստրիայի ներքին գործերի նոր մինիստր՝ Զեյսո-Ինկվարտը: Այդ արշավանքի ժամանակ Ավստրիայի միքանի քաղաքներում տեղի ունեցան զինված բնդէարումներ բնակչության հետ:

Փաշխտական հափշտակիչների լկոր վարմունքը դժուհություն առաջացրեց ավտորիստական ժողովրդի լայն ժամանակի մեջ: Այդ դժուհության ճնշման տակ Շուշնիդը վորոշեց դիմել հանրաքվեյի, վորպես Ավստրիայի գրավումից առաջացած դժուհության արագայալումն ձևի: Մարտի 13-ին Շուշնիդը հանրաքվենական ավտորիստական անկախության մասին յեղած հարցի շուրջը: Բայց Հիտլերը, վորը ինքն եր առաջ խոսում հանրաքվեյի անհրաժեշտության մասին, այժմ

վախեցավ նրա հնարավոր հետևանքներից: Մարտի 10-ին նա իր գործակալներին ցուցում տվեց՝ Ավստրիայում վիճեցնել հանրաքվեն, իսկ մարտի 11-ին, սպառնալով գերմանական զորքերի ներխուժումով Ավստրիա, ուղղիմատում առաջադրեց՝ վերացնել հանրաքվեն և իշխանությունը տալ Զեյսո-Ինկվարտին: Հիտլերի այդ ուղղիմատումը ընդունվեց, հանրաքվեն վերացվեց, Շուշնիդը պաշտոնաթող յեղավ:

Զնայած դրան՝ Հիտլերը այդ նույն որը իր զորքերը շարժեց ավտորիստական սահմանի վրայով: Մարտի լույս 12-ի գիշերը հիտլերականները գրավեցին կառավարական շինքերը: Ստեղծվեց նոր կառավարություն Զեյսո-Ինկվարտի գլխավորությամբ, վորը միաժամանակ ստացավ ներքին գործերի, վոստիկանության ու ռազմական մինիստրի պոստ:

Մարտի 12-ին ավտորիստական տերիտորիայի վրայով արդեն թուջում ելին գերմանական ոմբակոծիչները, ինքնաթիւներով տեղափոխում ելին գերմանական զորքեր, վորոնք մատակարարված ելին գնդացիբներով, ավտորիստական քաղաքներում տեղավորվեցին գերմանական մոտո-մեքենայացված մասերը: Այդ նույն որը Ավստրիա ժամանեց Հիտլերը՝ ռազմական մինիստրը Կեյտելի և գեսահպոյի տես Հիմմելերի ուղեկցությամբ:

Փաշխտական հափշտակիչները սկսեցին անպատեա կերպով պատժել ավտորիստական ժողովրդին: Յերկրում թագավորում եւ չտեսնված տեսորը: Հաշվում են Հազարավոր սպանվածներ, Հարյուրավոր ինքնասպանություններ, տասնյակ-Հազարավոր ձերբակալվածներ ու համակենտրոնացման ճամբարում նստածներ:

Ավատրիան դադարեց գոյություն ունենալ վորպիս ինքնուրույն, անկախ պետություն։ Նա վերածվել է մի գերմանական պրովինցիայի, վորտեղ տիրապետում են ֆաշիստական ազգեսորների բանդաները։

Ինչո՞վ բացատրել, վոր Հիտլերի այդ ձեռնարկումը, վորն ուղղված եր Ավատրիան զավթելու համար, մի ճեռնարկում, վորն անցյալում միքանի անգամ պարտություն ե կրել, հաջողվեց 1938 թ. փետրվարին։ Դրա պատճառը թագնված ե ներկայիս միջազգային իրադրության մեջ, Յելբոպայի կարեվորագույն կապիտալիստական պետությունների կողմից ազրեսորներին խրախուսելու քաղաքականության մեջ։

1934 թ. Ավատրիայում խոռվարարությունը ճընշելու պատճառներից մեկը հանդիսացավ այն, վորայդ խոռվարարությանը բացասարար վերաբերվեց այն ժամանակ հտալիան։

Պայքարն հտալիայի ու Գերմանիայի միջև Ավատրիայի համար սկսվեց համաշխարհային իմպերիալիստական պատերազմը վերջանալու հենց մյուս որը։ Խտալիան չեր ուղում, վոր Ավատրիան միացվեր Գերմանիային, վորովհետեւ այն ժամանակ Գերմանիայի սահմանները կհասնեյին ընդհուպ մինչև հարավային Տիրոլը (մարդ, վորն առաջ պատկանում եր Ավատրո-Հունգարիային), վորը պատերազմից հետո մտցվեց Խտալիայի կազմի մեջ։ Իսկ Գերմանիան ձգտում է գրավել հարավային Տիրոլը այն պատրվակով, թե այնուղև բնակչության մի մասը խոսում է գերմանիկներին լեզվով։

Բացի այդ՝ Ավատրիան Գերմանիային միացնելը

վերջինիս ձեռքը հիանալի դիրքեր կտար՝ հետագայում թափանցելու բալկանները և Հարավ-արևելյան Յեղողակայի յերկրները, հիանալի ուղմագաշտ՝ ուղմա-ատրատեղիական ճանապարհների ցանցով և ուժեղ զարգացած ծանր արդյունաբերությամբ։

Իր բացասական վերաբերմունքը գետի 1934 թ. խոռվարարությունը իտալիան արտահայտեց բավականին ակտիվորեն։ Նա այդ ժամանակ Ավատրիայի սահմանին մոտեցրեց, բազմահազար բանակ, վորը պատրաստ եր մտնել ավստրիական տերիտորիան, վորակեսպի չթողնի Ավատրիայի գրավումը Գերմանիայի կողմից։

Ֆրանսական ժուռնալիստ Ա. Դե Կերելիսը «Եպոկ» լրագրում հիշատակում է այն զրույցը, վորն ինքն ունեցել է Մուսաոլինիի հետ միքանի տարի առաջ։

«Խոսելով անշլյուսի մասին, —գրում է Կերելիսը, —«դուչեն» հայտարարեց, վոր այս հարցը Փաշիզմի համար կենսական հարց է։ Խտալիան իր սահմաններում ազատվեց գերմանիզմի պատճական սպառնալիքից, և Փաշիզմը կզավաճաներ իր միսիային, յեթե թույլտար, վոր այդ սպառնալիքը վերածնիկը։ Յեթե յեն նոր կայսրության փոխարեն Հռոմին տայի ամբողջ ՍՓրիկան ծայրեծայր, միենույն է Հռոմը չեր ների ինձ այդ բանը—բացականչեց Մուսաոլինին։»

Իսկ հիմա Խտալիան լոռկթյամբ վավերացնում է գեղքերն Ավատրիայում։ Այժմ Մուսաոլինին գերմանական Փաշիզմի խոնարհ ծառան է, նա վողջույնի դեկլարացիաներում թաղեց անցյալ տարիների իր պարձենկությատարությունները։

Իտալիային, իհարկե, հիմա ել այնքան ցանկալի չէ, վոր անմիջականորեն իր սահմանի մոտ հարեանը գերմանիան ե: Բայց հիմա նրանք հարիստրված են զիջումներ անել, նահանջել Գերմանիայի հանդես նույնիսկ այնպիսի կարևոր հարցերում, ինչպես ավստրիական հարցը: Ինչո՞վ ե բացատրվում իտալիայի այդ «զիջողությունը»: Բանն այն է, վոր գերմին տարբների ընթացքում իտալիան վարել ե և վարում ե չափազանց ուխտավոր ռազմական ավանտյուրաներ: Հարեշական պատերազմը փաստորեն չի վերջացել. հարեշական ժողովրդին ճնշելը մինչեւ այժմ ել իտալիայից խոշոր ուժեր ե հսկայական դրամական միջոցներ ե պահանջում, վորպիսիք չունի իտալական Փաշիստների սպառված, դատարկված դանձարանը:

Եատ զլխացավանք ու միջոցներ են պահանջում ինտերվենցիաները Իտապահիայում և իտալիայի ադրեսիվ քաղաքականությունը, վորն անմիջապես ուղղված ե ընդդեմ Անգլիայի ու Ֆրանսիայի՝ Միջերկրական ծովի վրա: Ռազմական ավանտյուրաների վրա արած ծախսերը կատարվում են յերկրի տնտեսական գրությունը վատթարացնելու հաշվին, լայն աշխատավորական մասսաներին կողոպտելու հաշվին: Այս ամենն առաջնում ե իտալական ժողովրդի գժգոհության աճ և ել ավելի յե շիկացնում Փաշիստական դիկտատորների վոտքի տակի հողը: Այս հանդամանքներն, ինչպես յերեւմ ե, թելագրեցին Մուսոլինիին Ավստրիայի մասին յեղած հարցում Գերմանիային զիջումներ անելու անհրաժեշտությունը, վորպեսզի ապահովված լինի Գերմանիայի պաշտպանությամբ իր ավանտյուրանը րում՝ այլ կետերում: Ավստրիան այստեղ «մանրուն

գրամ» հանդիսացավ իտալիայի ու Գերմանիայի միջև յեղած գործարքում:

Այս գեղքերն Ավստրիայում վառ ապացույց են այն բանի, վոր թույլ յերկրների համար անհուսալի յե պաշտպաննել իր անկախությունը, հենվելով մի Փաշիստական ազգեսորի վրա ընդդեմ մյուսի: Ավստրիայի կողմնորոշումը դեպի իտալիան, այն հաշիվները, թե կատանա իտալիայից պաշտպանություն և ողնություն ընդդեմ Գերմանիայի, հաշիվներ, վորոնք այժմ այնպիսի պարտություն կրեցին, այդ բանի վառ ապացույց են հանդիսանում:

Անգլիան ու Ֆրանսիան ավստրիական գեղքերում զրավում են չմիջամտելու գիրք, վորը ըստ եյտթյան՝ ազրեսորին ուղղակի աջակցություն ե հանդիսանում: Բրիտանական կառավարությունը, վորը Փաշիստական պետությունների հետ համաձայնության բացահայտում ուղղությունն ե բռնել, այդ գեղքերին վերաբերվեց բացահայտորեն բարյացակամ կերպով: Անգլիական կառավարության պաշտոնական որդան՝ «Թարմ»-ը միանգամայն աներկմտորեն հավանություն ե տալիս Գերմանիայի ազրեսիվ քաղաքականությանը: «Թարմ»-ը՝ սույն թվի փետրվարի 17-ի առաջնորդողում մենք գտնում ենք Ավստրիայում՝ գերմանական ազրեսիայի հետեւյալ գնահատականը.

«Այնպիսի եքսպանսիա, վորը նշանակում ե գերմանական՝ վորպես մեծ, բարձր կազմակերպված արդյունաբերական պետության՝ տնտեսական գերազանցության վրա հիմնված գերմանական ազգեցության լայնացում... այդ մտքով առած եքսպանսիային Մեծ Բրիտանիան հակազդեցություն չպետք ե ցույց տա»:

Զմբջամտելու հենց նույնպիսի գիրք գրավում է, ըստ եյության, նաև Ֆրանսիան։ Այս ամենը Հիտլերին հարավորություն տվեց Ավստրիան գրավելու իրադրժմանը ձեռնամուխ լինելու։

Գերմանական ֆաշիզմը վոչ-պարզամտորեն եր ձգտում գրավել Ավստրիան։ Այդ յերկիրը նշանակելի բնական հարստություններ ունի։ Նրա ընդերքը պարունակում են ողտակար հանածոներ, վորոնք ծառայում են վորպես հումք ռազմական արդյունաբերության համար՝ քարածուխ, յերկաթ, արձիճ, ցինկ, պղինձ և այլն։ Ավստրիայի զարգացած գյուղատնտեսությունը պետք է վոչ-անկարելոր ոժանդակություն հանդիսանա ֆաշիստական Գերմանիայի համար։ Հզոր արդյունաբերությունը, առաջին հերթին մեքենաշինական ու ռազմական ձեռնարկությունները ավելացնում են «մեծ» պատերազմի նախապատրաստումն արագացնելու հնարավորությունները, պատերազմ, վորի մասին յերազում և գերմանական ֆաշիզմը։ Վերջապես, Ավստրիան լրացուցիչ մարդկային ռեզերվ և ֆաշիստական Գերմանիայի համար։ Տիրանալով Ավստրիային, Հիտլերը իր բանակը պատերազմի ժամանակ կարող է ավելացնել ևս կես միլիոն մարդով։

Բայց ամենակարևորն այն է, վոր գերմանական ֆաշիզմը չի սահմանափակվում միմիայն Ավստրիայի գրավումով։ Այդ առաջին քայլն և կենորոնական և Հարավ-արևելյան Յեվրոպայի մյուս յերկրների վրա հետագա հարձակման։ Անմիջական սպառնալիքի տակ հանդիսացան Զեխոսովակիան, Հունգարիան, Ռումինիան, բալկանյան յերկրները։ Հետագա գերգերը՝ գերմանական գորքերի շարունակվող կենտրոնացումը

չեխոսովակյան սահմանի վրա, գերմանական ֆաշիզմի հենցեյնական գործակալության քայլայիշ աշխատանքը Զեխոսովակիայում և այլն՝ ցույց տվին, վոր Հիտլերը իր առաջ-խնդիր և դրել՝ գրավել Զեխոսովակիան, զրկել նրա ժողովուրդներին անկախությունը ու ազատությունից։

Անդիմայի իմպերիալիստական, ուեակցիոն բուրժուազիայի կողմից խրախուսված, միքանի բուրժուական դեմոկրատական պետությունների կողմից աղբեսիայի թողարկությամբ, գերմանական ֆաշիզմը արագ շրջում է Յեվրոպան՝ պատերազմի ջահը ձեռքին։ Ավստրիական գերգերի որինակը ակնհայտորեն ցույց է տալիս, թե ինչպես անարգել կերպով՝ ֆաշիստական արքեսորները շարունակում են զավթումների քաղաքականությունը, պատերազմի քաղաքականությունը։

Պատերազմի սպառնալիքը կախվել է Յեվրոպայի վրա, ամբողջ աշխարհի վրա։

Բոլոր նրանք, ում համար թանգ են խաղաղության շահերը, պետք է հիշեն վերջին ժամանակու կենտրոնական Յեվրոպայում տեղի ունեցած գերգերի իմաստը։

Խորհրդային ժողովուրդը զգաստորեն հաշվի յե առնում պատերազմի անող սպառնալիքը։

Խորհրդային կառավարությունը նորերս դարձյալ ընդգծեց իր պատրաստակամությունը՝ հանդես գալ հանուն խաղաղության պաշտպանության։ Ուստիերկրյա ժուռնալիստներին ուղղած իր հայտարարության մեջ՝ մարտի 17-ին ընկ. Լիտվինովը խորհրդային կառավարության անունից հայտնեց։

«Այժմյան միջազգային դրությունը բոլոր խաղաղասեր պետությունների առաջ, և հատկապես խոշոր տերությունների առաջ, նրանց պատասխանատվության հարցն ե գնում Յեվրոպայի ժողովուրդների հետագա հակասագրի համար, և վոչ միայն Յեվրոպայի: Խորհրդային կառավարությունը գիտակցում է այդ պատասխանատվության իր բաժինը, նա գիտակցում է նույնպես այն պարտականությունները, վորոնք բղխում են իրեն համար ինդայի կանոնադրությունից, Բրիտան-Կելլոգի պակտից և փոխադարձ ոգնության պայմանագրերից, վոր կնքել ե նա Ֆրանսիայի ու Չեխոսլովակիայի հետ, յետ խորհրդային կառավարության անունից կարող եմ հայտարարել, վոր նա իր կողմից առաջվա պես պատրաստ ե մասնակցելու կուլտիվ այն գործողություններին, վորոնք կվորոշվելին իրեն հետ մեկտեղ և վորոնքնպատակ կունենային դադարեցնելու ազրեսիայի հետագա զարգացումը և վերացնելու նոր համաշխարհային սպանդի աճող վտանգը: Խորհրդային կառավարությունը համաձայն և Ազգերի լիգայում կամ նրանից դուրս մյուս տերությունների հետ միասին անմիջապես քննության առնել հանգամանքների թելագրած պրակտիկ միջոցառումները: Վաղը կարող ե արդեն ուշ լինել, բայց այսոր դրա ժամանակը դեռ չի անցել, յեթե բոլոր պետությունները, հատկապես մեծ տերությունները, ամուր աներկմիտ դերք գրավեն՝ խաղաղությունը կոլեկտիվ կերպով փրկելու պրոբեմի նկատմամբ»:

Խաղաղության բոլոր բարեկամների կողմից բերկրանքով ընդունված այս հայտարարությունը մի անգամ ևս ընդգծեց ԽՍՀՄ ղերը՝ վորպես ավանդարդի՝

ֆաշիստական ազրեսորների գեմ մղվող պայքարում, հանուն խաղաղության ու ժողովուրդների ազատության:

ԽՍՀՄ քաղաքականությունն անփոփոխ կերպով հանդիսացէլ ե և կհանդիսանա՝ խաղաղության քաղաքականություն, քաղաքականություն՝ ակտիվորեն պաշտպանելու բոլոր նրանց, ովքեր իրականում պայքարում են սպառնացող պատերազմի դեմ:

Դրա հետ մեկտեղ մենք այսուհետեւ ել կամրացնենք Խորհրդային Միության պաշտպանունակությունը, վորպեսզի պատերազմի վոչ մի սպառնալիք մեզ վտանգավոր չլինի:



Խաղաղության նախանձ այդան  
նախանձիք և պարզեցն  
նազարաւած և պահ մահն  
նալիման և շնչարցն  
նախանձ և շնչարցն յարածն

ՕՇ Ա առաջ օՇ Վ առաջ հաջողություն  
առաջ առաջ օՇ Վ առաջ հաջողություն  
ՕՇ Վ առաջ օՇ Վ առաջ հաջողություն

Թարգմ. Ռուզան Վարդապետյան  
Խմբագիր Վ. Փիմաշյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Մրբագրիչ Հ. Մանվելյան  
Կոնսորչ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավիթի լիազոր № Կ.—3286, հրատ. № 576

Պատվեր № 89, Տիրաժ 5.000

Հանձնված և արտադրության 13/V 1938 թ.

Սառըագրված և տպագրելու 27/V 1938 թ.

Գինը 45 կ.

Գետհրատ—Քաղաքական գրականության հրատարակության  
տպարան, Յեղեկան, Ալավերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0191981

309

ԳԻՒԾ 45 Կ.

Ա. ԲՈՅԴԵՍ  
СОБЫТИЯ В ГЕРМАНИИ  
И АВСТРИИ

Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1938